Արձանագրություն 3

ՀՀԿԳՆԳՀԱՇՁԲ-19/10 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

25.07.2019թ.
ժ.11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մասիս Աղայանց /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝ Հովսեփ Գրիգորյան /գնահատող/
Արսեն Բաղդասարյան /գնահատող/
Մարիամ Պողոսյան /բացող/
Խաչատուր Գևորգյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Մարգարյան

1. Որակավորման փաստաթղթերի ներկայացման մասին
(Մ. Աղայանց)

1.1 <<Անապատ-2>> ԱԿ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է համապատասխան եզրակացությունը, համաձայն որի <<Անապատ-2>> ԱԿ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունեն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

2. Որակավորման փաստաթղթերի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների մասին
(Մ. Աղայանց)

2.1 <<Անապատ-2>> ԱԿ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում արձանագրվեցin հետևյալ անհամապատասխանությունները.

- Ներկայացված 09.12.2016թ ՀՀ պաշտպանության նախարարության հետ կնքված թիվ ԲԸԱՀԱՇՁԲ-10-13 պայմանագրի շրջանակներում նմանատիպ կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, պայմանագրի հավելված 2 գնման ժամանակացույց-օրացուցային գրաֆիկով սահմանված աշխատանքների կատարման ժամկետը չի համապատասխանում հանձնման-ընդունման արձանագրությամբ փաստացի կատարված ժամկետների հետ, ինչպես նաև վերը նշված պայմանագիրը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:
- Հավելված 3.2-ի աշխատանքային փորձի գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը սյունակում լրացված տեղեկատվությունը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:
- Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետի հաստատած գրավոր համաձայնությունը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ 5 կողմ , դեմ 0:

2.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետը կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել <<Անապատ-2>> ԱԿ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ 5 կողմ , դեմ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին
(Մ. Աղայանց)

3.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը կազմակերպել <<Անապատ-2>> ԱԿ-ի կողմից շտկված փաստաթղթերը ներկայացվելու օրվանից հաշված մինչև տաս աշխատանքային օրվա ընթացքում ժամը 12:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 303 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 31.07.2019թ. ժամը 12:00-ին

Հանձնաժողովի նախագահ՝ Մասիս Աղայանց /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝ Հովսեփ Գրիգորյան /գնահատող/
Արսեն Բաղդասարյան /գնահատող/
Մարիամ Պողոսյան /բացող/
Խաչատուր Գևորգյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Մարգարյան

4. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին

4.1 <<Անապատ-2>> ԱԿ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

4.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները <<Անապատ-2>> ԱԿ-ի հայտը գնահատել բավարար և հայտարարել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

4.4 Ընտրված մասնակցին, անգործության ժամկետի ավարտից հետո, էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Մ. Աղայանց /նախագահ/
_____ Հ. Գրիգորյան
_____ Ա. Բաղդասարյան
_____ Մ. Պողոսյան
_____ Խ. Գևորգյան
_____ Ա. Մարգարյան /քարտուղար/